

## ՆՈՐ—ԶՈՒՂԱՅՈՒՄ 1641 ԹՈՒԻՆ ՏՊԱԳՐՈՒԱԾ «ԽՈՐԴԱՏԵՏՐ»Ը

Աստուածաշունչի տպագրութեան 300-ամեակի առիթով, տեղին է որ մէկ անգամ եւս անդրադառնեաք մեր նախնեաց երախտաւոր գործինքնի կեանքին ու գործին, որոնք Հայ ժողովրդի լուսաւորութիւնն ու զարգացումը, իրենց կեանքի նպասակը դարձնեալով՝ աքնեցին ու ճգնեցին, որպէսզի ապդը յարատեւի:

Այս երախտաւորներից մէկն է Նոր-Ջուղայի առաջնորդ Խաչատուր Կեսարացին, որ եղել է Աստուածաշունչը տպագրող Ռևանի Վարդապետի աւագ ուսուցիչը. մի զարգացած ու լուսամիտ վարդապետ՝ որ 1620 թուին որպէս նուիրակ եկել է Նոր-Ջուղա եւ ժողովրդի ինդրանքով ստանձնել Ս. Ամենափրկչեան Վանքի առաջնորդական պաշտօնը:

Կեսարացու ջանքերով 1639 թուին Ջուղայում հիմնուած է մի տպարան, ուր 1641 թուին տպագրուած է «Հարանց Վարք անունվ ստուարածաւալ՝ 705 էջանոց գիրը»: Ցաշորդ 1642 թուին՝ «Ալտենի Ժամադիրքը», իսկ յետոյ՝ 1647 թուին, Կեսարացու վախճանումից եւ նրա աշակերտ՝ Երևանայում տպագրական աշխատանքներին ժամաթացած Ցոլչանիս Վարդապետի վերադարձից յետոյ՝ «Պարզատումար Ազարիայի դրբեկ»:

Ցովհաննէս Վարդապետն իր առաջին դրբի տպագրութիւնից յետոյ ձեռնարկուած է տպագրելու վաղուց ցանկալի հայերէն Աստուածաշունչը, որ մնում է թերի՝ ներքին հակառակութիւնների պատճառով:

Այս առթիւ պատճագիր Խաչատուր Վարդապետ Ջուղայեցին, Կեսարացու տպագրած


գրքերի ժաման Խոսելուց յետոյ աւելացնեալ է.

«Աւ եւ ընդ բազում գրեանց՝ որք տպեցին, սկսան ընդ որոց եւ տպել զԱստուածաշունչ գիրն, այլ վասն մեղաց մերոց մնաց թերակատար, որպէս կայ մինչեւ ցայսօր ի միջի մերում, ոս կարի լաւագոյն ունելով զթուլին եւ զգիրն, քան զառալին տպեալ գրեանոն» (**Պատմութիւն Պարսից**, Վաշարշապատ 1905, էջ 121):

Մինչեւ այժմ այն կարծիքը կար, որ Զուլայում 1641-47 թուերին տպագրուել են միայն վերոյիշեալ երեք լրիւ ու մէկ թերի դրբերը. մինչդեռ զանուած մի նոր գրքով պարզուած է որ Խաչատուր Վարդապետի 1641 թուին տպագրած «Հարանց Վարք» դրբի հետ կամ դրանից յետոյ, տպագրուել է նաև մի այլ գիրը՝ «Ասորհուատեար» անունով:

Գիրը բաղկացած է 48 էջից կամ 24 թերթից, բաժանուած է վեց պրակի, իւրաքանչիւր պրակ՝ չորս թերթ: Համարակալած է Հայկական տառերով՝ ա-խէ (1-47), էջերի մէկ թուի պակասն առաջացել է էջ 44-ի (խէ) եւ էջ 45-ի (խէ) միջնուում Համարակալուած (բաց թողնուած) մէկ էջից:

«Ասորհուատեար» ունի 23x18 սմ. ծաւալ, նիւթը հաստ գեղնաւուն թուղթ է, տպուած երկսիւակ: Առաջին էջի ա սիւնակի վերեւում ունի մի ճակատագարդ: Տառերը շարուած են խոշոր գրերով, իսկ վերնագիրները՝ մանր բոլորագրերով: Մանր գրերը նմանուած են «Հարանց Վարք»ի տպականին, իսկ խոշոր գրերը՝ «Ալտենի Ժամադիրք»ին:



Եջ մը ժառիրդատեսքն:

Գործ է ածուած սեւ եւ կարմիր թանաք։  
Կարմիր թամաքով են էլ ա, դ, ե եւ ը էլ երի  
մի քանի վերնագիրներն ու մեծատառերը։  
Մեծատառերից մի քանիսը շարուած են  
հաւաքրերով։

Գիրքը վերջում շատ ժլատ ձեւով ունի  
մի երկարողեան յիշատակարան, զոր բերում  
ենք ստորեւ։

«Ո՞լ սր. Պատ(ա)ր(ա)գօղ յիշեա զիան-  
չ(ա)տուր զ(ա)րդ(ապե)տ եւ զմ(ա)յը յի-  
թւ։ ԱՊ. (1641)։ Կ(ա)զմ(ե)ց»

Գործած քի վերջաւորութեան վերջակէտ  
զրուած չէ, որ տեղի է տալիս կարծելու թէ  
թերթ է պակասում. բայց յիշատակարանի  
զոյութիւնը մասամբ ցրում է այդ կաս-  
կածը։

Առև «Խորհրդատեր»ից մինչ այժմ,  
գտնուել է երկու օրինակ, որոնցից մէկը՝  
զտնում է երեւանի Մաշտոցի մատուան Մա-  
տենագարանում (թիւ 1702), իսկ երկ-  
րորդը՝ տողերս գրողի մօտ։

Նոր-Զուղա

L. Գ. ՄԻՆԱՍԵԱՆ